

ԿՐՕՆԸ ԿԸՆ—ԲԸՐՈՅՐԿԸՆ

ԿԻՒՐԱԿԷ

(Տօների կրճատման հարցի առիթով)։

(Церк. Вѣст. № 6. А. Пашковъ)

Այժմ՝ կերպարանափոխութիւններ կամենալով մըտնել ոչ միայն պետական և քաղաքական այլ և եկեղեցական շրջանի մէջ՝ աղետաւոր սխալներից խուսափելու համար մենք պէտք է առանձին իմն ուշադրութեամբ և զգուշաւորութեամբ առաջ գնանք այդ ճանապարհով և, հիմնական կամ մասնաւոր վերակազմութիւնը սկսելուց առաջ պէտք է խորապէս ուսումնասիրենք ու հետազօտենք այն առողջ և կարեւոր հիմունքները, որոնց վերայ հանգչում է մեր պետական և եկեղեցական կազմը շատ դարերի ընթացքում։ Յատկապէս այդ զգուշաւորութիւնը պէտք է պահել եկեղեցական բոլոր գործերի և ձեռնարկութիւնների վերաբերութեամբ, որովհետեւ յայտնի է, որ քրիստոնէական գաղափարն ու կեանքի պատկերը մեր այժմեան ժամանակից շատ ու շատ առաջ են սկզբնաւորած, և ոչ թէ պիտի սկսուին առաջիկայում։

Վերջին եկեղեցական—հասարակական վերակազմութիւնների և բարեօրոշումների բազմաթիւ ծրագրների կարգում առաջ է մղւում տօները կրճատելու ծրագիրն էլ։ Այդ ծրագրի գլխաւոր դրդապատճառն է այն հանգամանքը, որ մեր ժողովուրդը որպէս թէ պահելով մեր եկեղեցական բազմաթիւ տօները, խուսափում է օրական աշխատանքից և դրանով ահագին վնաս է հասցնում Ռուսաստանի տնտեսական բարեկեցութեանը։

Մինչև անգամ «պրազդնիկ» (տօն) բառից, որ նուիրական նշանակութիւն ունի (նախագծի սկզբնապատճառները) առարկում են, որ ծագել է ածական «պրազդնի»

այսինքն ոչինչ չանող՝ բառից և այդ բառն արդէն իւր մէջ պարունակում է պախարակելի միտք։

Այդ կարեւոր նախագծին լիակատար անկողմնապահութեամբ մօտենալու համար, նախապէս հարկ է դնել և վճռել այն հարցը, կարելի է բոլորովին անգործ ժամանակ անցկացնելու միտքը նայնացնել քրիստոնէական տօնի գաղափարին, որը տեղի է ունենում որպէս եկեղեցուց նուիրագործուած հանգիստ՝ հանապազօրեայ ջանքերից ու զբաղմունքներից։

Արդէն այդ հարցը կանխօրէն դնելու անհրաժեշտութիւնը ցոյց է տալիս, թէ այժմ՝ որքան նսեմացել է քրիստոնեաների գիտակցութեան մէջ ինչպէս քրիստոնէական տօների ծագման սկզբունքը, նոյնպէս և նրանց նշանակութիւնը՝ եկեղեցու կեանքի մէջ։

«Երկոտասան» կոչւող տօների պատմութեանը չդիպչելով, որոնց մեծ մասը հաստատուած է եկեղեցուց առաքելական շրջանից յետոյ, կանգ առնենք բացատրելու քրիստոնէական աշխարհի կարեւորագոյն տօնի-կիրաւիւէի ծագման ժամանակը, միանգամայն աշխատենք մեկնել և զանազանութիւնները ինչպէս այդ օրուայ նշանակութիւնը հասկանալու՝ նոյնպէս և նրան տօնելու և ժամանակի միջոցների վերաբերութեամբ, որ կիրառուում էր հնագոյն շրջանում և նկատուում է եկեղեցու այժմեան կեանքում։

Կասկած չկայ, որ հին քրիստոնէական կիրաւիւէի տօնը հաստատուել է քրիստոնէութեան առաջին ժամանակներին, և տօնւում էր առաքելական եկեղեցու համայնքից ի յիշատակ Մեր Տէր Յիսուս Քրիստոսի յարութեան, որը աւետարանական պատմութեան համեմատ պատահում էր զատկական շաբաթի առաջին օրը (Մատթ. 28, 1, Մարկ. 16, 2, Դուկ. 24, 1, Յովհ. 20, 1, Եւսեբ. եկեղ. պատմ. XII, 27)։

Անհրաժեշտ է նկատել, քրիստոնէական այս «ուրախութեան» տօնի հաստատութեան սկզբնաւորութիւնից սկսած, որ տօնւում էր այն ժամանակի բաղադրակիր թաշ-

խարհի ամբողջ տարածութեան վերայ, Երուսաղէմից սկսած մինչև Հռովմ, այն միացած էր եկեղեցական առաքելական գործերի հետ: Այսպէս, Պօղոս առաքեալը I Կորնթացւոց թղթում (16, 1—3) գրում է. «Այլ վասն հաշուին, որ ի սուրբսն է, որպէս պատուէր ետու եկեղեցեացն Գաղատացւոց նոյնպէս և դուք առնի՞րք: Ըստ իւրաքանչիւր միաշաբաթուցն, (այսինքն կիւրակէներին) իւրաքանչիւր ոք ի ձէնձ անձին իւրում գանձեսցէ, որ ինչ և յաջողեսցի. զի մի յորժամ գայցեմ, յայնժամ հաշիւք լինիցին. այլ յորժամ եկից, զոր միանգամ ընտրեցէք թղթովքդ, զնոսա առաքեցից տանել շնորհան ձեր Երուսաղէմ», (տես և թուղթ Պօղոսի առ Հռովմայեցիս, 15, 26. նոյնպէս 12, 43):

Նոյնպէս և առաջին ժամանակներում կիւրակէ օրը պատուելը արտայայտուում էր «հացի բեկանելով» և քարոզութեամբ, կամ ինչպէս Պօղոս առաքեալն է ասում (առ. Հռովմ. 15, 16), «ըղձակերտս առնել զաւետարանն Աստուծոյ», ըստ այսմ, Գործք Առաքելոցում (20, 7) ասուած է, թէ Տրովադայում, երբ հասաւ այնտեղ Պօղոս առաքեալը, որ կատարում էր իւր վերջին ճանապարհորդութիւնը դէպի Երուսաղէմ, «շաբաթի հենց առաջին օրը, երբ աշակերտները ժողովուած էին հացը բեկանելու համար, Պօղոսը մտադրուելով հենց հետեւեալ օրը դուրս գալ, խօսեց նրանց հետ և շարունակեց խօսքը մինչև կէս գիշեր: Երբ Յովհաննէս աւետարանիչը բնակութիւն հաստատեց Փոքր Ասիայում, յատկապէս, Եփեսոսում, նա գտաւ, որ այնտեղի բրիստոնեաները ամենուրեք, շաբաթուայ առաջին օրը կիւրակէ են տօնում և նրա Յայտնութեան գրքում առաջին անգամ այդ օրը կոչուում է «կիւրակէ» թիւ 86-ում կամ «Տէրունական օր» (1, 10):

Այստեղ միայն հարևանցի նկատենք, (Պօղոս առաքեալի առ Կորնթացիս Ա. թուղթ (Ժ. 16, 17 և ԺԱ. 20—34), որ վերև յիշուած «հացի բեկանելը» սկզբից արդէն նշանակում է Ս. Հաղորդութեան խորհուրդ, որը ամենայն հաւանականութեամբ նախկին քրիստոնեայ շատ

համայնքների մէջ կատարուում էր երեկոյեան սիրոյ (ազապ) հետ և կատարուում էր երեկոյեան ժամերին ի յիշատակ Փրկչի խորհրդաւոր երեկոյի (Ղուկ. ԻԳ. 30, 35. Յովհ. ԻԱ. 1—13. Յուդայի առաքելոյ թուղթ 1, 12. Իգնատ. առ Զմիւռնացիս Է.:

Նախնական քրիստոնէութեան շրջանում կիրական էր կամ տէրունական օրուայ (սոր արևի օր» էլ էր կոչուում, հեթանոսների հետ բացատրութեան ժամանակ) համատարած լինելը լիովին հաստատուում է Ա. և Բ. դարերի վերջի քրիստոնեայ գրուածքներում:

Ցանկալով ըստ կարելոյն լաւ պատկերացնել, թէ ինչ էր այդ տօնը և ինչպէս էր կատարուում քրիստոնէութեան նախնական դարերում, յառաջ կը բերենք փոքրիկ կտորներ 1) 12 առաքեալների վարդապետութիւնից, 2) Ս. Յուստինոսի «Զրոյց հրէայ Տրփիոնի հետ» շարադրութիւնից և 3) Տերտուղիանոսի «Անալօգիա» շարադրութիւնից:

Երկրտասան առաքեալների վարդապետութեան ժԳ. գլխում ասուած է, որ տէրունական օրը (այսինքն կիրական) արժան է կատարել հաղորդութեան խորհուրդը, որին կարող են հաղորդուել միայն մկրտուածները, և թէ նրա կատարելուց առաջ, պէտք է առաջուց խոստովանել մեղքերը և հաշտուել ընկերի (այսինքն եղբօր) հետ, որի հետ վէճ կայ: Անկասկած, քրիստոնեայ նախկին հասարակական աստուածապաշտութիւնը թէ և չունէր խիստ ճշտուած աղօթքների և արարողութիւնների ձևեր, այնուամենայնիւ պահանջում էր առ Տէր գոհութեան զգացմունքների կարգաւորեալ հասարակական արտայայտութիւն, դրա համար էլ 12 առաքեալների վարդապետութեան մէջ արդէն սահմանուած է հաղորդութեան մի քանի աղօթքների նմանօրինակ ձև: Թէև բաւարար ցուցումն չկայ, թէ ով էր կատարում հաղորդութեան խորհուրդը, բայց ժ. գլխի 7 տանից պարզ երևում է, որ այս խորհուրդը կատարում էին Նոր կտակարանի մարգարէները, որոնք գտնուում էին համայնքների մէջ, որի ժամանակ նրանց թոյլ տրած էր գոհանալ՝ որքան կը

ցանկային, կամ՝ այլ խօսքով, կարող էին հաղորդութեան ազօթքներ արտասանել ըստ ներշնչութեան:

12 առաքեալների վարդապետութեան հետ ծանօթանալը շատ լաւ համոզում է, թէ ընդհանրական, առաքելական և համախմբող եկեղեցու մասին գաղափարը հենց սկզբից ընդունուած էր նախնական քրիստոնեաներից իւր նշանակալից լրութեամբ և ամբողջութեամբ: Աւելի մանրամասն ուսումնասիրելով այդ յիշատակարանը, աւելի ևս պարզում է այն փաստը, որ նախկին քրիստոնեաների հոգևոր-կրօնական կեանքի ստեղծագործող գլխաւոր ոյժը ոչ այնքան պարփակուած էր մասնաւոր անհատի վերացական-մտաւոր և հոգևոր տքնութիւններով, որքան քրիստոնեայ համայնքի հոգևոր-բարոյական տրամադրութեամբ: Դրա համար էլ նոյն ինքն ազօթքը, (որին հնումն այնքան ոյժ և նշանակութիւն էր տրւում), նոյնպէս և պահքը, ապաշխարութիւնը, և հաղորդութեան խորհրդի կատարումն, համայնական գործ ու առաքինութիւն էին, մասնաւոր երբ հոգևորապէս բարձրացած՝ մասնակցում էր ամբողջ համայնքը միահամուռ: Այս միահամուռ շահագրգռութիւնը գէպի այն ամենը, ինչ որ հոգևոր, եկեղեցական է (որի մէջ հանգչում է համայնականութեան արմատը) համարւում էր ամենամերձ, ընական և յուսալի ճանապարհը Աստուծոյ հետ միանալու համար: Քրիստոնէական եկեղեցու հին կեանքումը Աստուծուն որոնելու և գտնելու այս յատկութիւնը աւելի ևս աչքի է ընկնում, երբ համեմատում ենք հնագոյն մի քանի հերետիկոսական (գնոստիկեան) ապանդների տրամադրութեան հետ, ուր Աստուծոյ հետ հաղորդակցութեան այսպիսի ճանապարհը գտնւում էր մտաւոր անհատի վերացական-մտաւոր վիճակում, անհատի, որ դրա համար իւր մերձաւորների օգնութեան ու գործակցութեան կարիքը չէր զգում:

Ս. Յուստինոսի Ա. Ապօլոգէայի մէջ գտնում ենք հետաքրքիր մանրամասնութիւնները, թէ հին քրիստոնեաները ինչպէս էին անցկացնում տօնական ժամանակը: § 67 նա յայտնում է. «Արևի կոշուած օրը (այսինքն կիւ-

րակէ օրը) մենք քաղաքներում կամ գիւղերում ապրողներս մի տեղ ենք խմբւում, և որքան ժամանակը ներում է, կարգացւում է Առաքեալների ընթերցուածները կամ մարգարէների գրածները, Յետոյ երբ ընթերցողը դադարում է, երէցը բերանացի խրատ և յորդոր է կարգում նմանելու այն գեղեցիկ նիւթերին (այսինքն որոնք կարգացուեցին Սուրբ Գրքից), Յետոյ բոլորս միասին կանգնում ենք և աղօթք ենք վերառաքում: Իսկ աղօթքը, աւարտելուց յետոյ, ինչպէս առացի վերև, բերւում է հաց և գինի, և երէցը, որքան կարողանում է, աղօթք և գոհութիւն է վերառաքում, ժողովուրդը իւր համաձայնութիւնը յայտնում է—ամէն—բառով, կատարւում է հացի բեկումն և իւրաքանչիւր ոք հաղորդւում է այդ պատարագին, որի վերայ կատարուել է աղօթքն ու գոհութիւնը, իսկ ներկայ շեղողներին ուղարկւում է սարկաւազի ձեռքով, կարողութիւն ունեցողներն ու ցանկացողները, իւրաքանչիւրը իւր յօժարութեամբ, տալիս են, ինչ կամենում են, և գանձուածը պահւում է երէցի մօտ, իսկ նա հոգս է անում որբերի, օյրիների և տկարութեամբ կամ այլ պատճառով բոլոր կարօտների, բանտում եղածների, հեռաւոր օտարների և առ հասարակ համայնքի մէջ բոլոր գտնուածների համար: Արևի օրը բոլորս համախմբւում ենք նրա համար, որ այդ առաջին օրն է, երբ Աստուած փոխելով փոշին ու նիւթը՝ ստեղծեց աշխարհը, իսկ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսը նոյն իսկ օրը յարութիւն առաւ մեռեալներից:»

Տերտուղիանոսը իւր Ապօլոգիայում (գլ. ԺԶ.) ցոյց տալով, որ քրիստոնեաները աղօթելիս դէպի արեւելք են դառնում, ի միջի այլոց նկատում է՝ «եթէ անձնատուր ենք լինում ուրախութեան շարեգակի» կոչուած «օրը», դրա պատճառը բնաւ այն չէ, որ նրան երկրպագենք: Այդ օրը անմիջապէս հետևում է Սատուրնի (շաբաթ) օրուան, որ դուք անց էք կացնում անգործութեամբ և խնջոյքով, իսկ մենք բոլորովին այնպէս չենք տօնում, ինչպէս հրէաներն են տօնում, որոնց ոչ օրէնքը և ոչ կարգերը զիտէք դուք:»

Մեր փոքր յօգուածում բաւականաւորով վերե յիշուած ցոյցմունքներով, անկախ յետնագոյն սուրբ հայրերից և պատմական-կանոնական գրուածքներից ու յիշատակարաններից, կարծում ենք հնարաւոր է անել հետեւեալ եզրակացութիւնները.

Ա. Նախկին քրիստոնեաների շրջանում կիւրակէի տօները բոլորովին տարբեր էր ըստ նշանակութեան և միջոցների Հին կտակարանի շաբաթը տօնելու ժամանցքի եղանակից. շաբաթը լինելով սահմանուած ի յիշատակ այն բանի, որ Տէր Աստուածը ամբողջ աշխարհը ստեղծելով, այդ օրը հանգստացաւ իւր բոլոր գործերից, կապւում էր և կապւում է բոլորովին հանգստութեան հետ, որ ըստ օրինի պարտաւորական է ամեն մի ճշտապահ հրէի:

Այստեղ կանգ չենք առնի այն խնդրի վերայ, թէ Պաղեստինի հրէաները ընդունելով քրիստոնէութիւն հենց միանգամից ընդհատեցին Հին կտակարանի շաբաթը տօնելը և դադարեցին շաբաթանալուց, թէ, ինչպէս ցոյց են տալիս մի քանի պատմական հաւաստիքը, քրիստոնեայ դարձած այս հրէաների մէջ մի առ ժամանակ տօնւում էր թէ շաբաթը և թէ կիւրակէ օրը: Մեր համար նկատելու ամենակարեւորը այն է, որ բոլորովին հանգստի և մարմնական անգործութեան պահանջը հրէական շաբաթի պահանջ է և ոչ քրիստոնէական տօնի, ընդ սմին այդ պահանջը հիմնւում է հրէական կրօնի խիստ ձեւականութեան վերայ:

Բ. կիւրակէի տօնի հիմքն է, ինչպէս յայտնի է, քրիստոնէական ամբողջ աշխարհում, նոյն ուրախարար իրողութիւնը, յանուանէ Քրիստոսի յարութիւնը, և այն քրիստոնեաների մէջ առաջ բերեց ոչ թէ հանգստի և պարապութեան, այլ ամենալարուած փոխադարձ յարաբերութեան պահանջ, որ առաջնորդւում էր դէպի միահամուռ բազմազան և եռանդուն գործունէութիւն. Այս գործունէութիւնը, ինչպէս տեսանք, արտայայտւում էր, 1) մեծափառ, հանդիսաւոր-հրճուալից աստուածաշնորհութեամբ, որի ժամանակ, Ա. Տիեզերական ժողովի որոշման համե-

մատ (կանոն 20), բոլոր քրիստոնեաները ի պոյց իրանց հրճոււանքի պէտք է ծունկ չըջողէին, այլ պէտք է կանգնած ազօթք մատուցանէին Աստուծոյ. 2) Ընդհանուր ազատ խարութեամբ, չար գործերից խուսափելով ընդհանուր ներմամբ, ազգական ննջեցեալներին յիշատակելով և եղբայրական փոխադարձ համբոյրով, իսկ քրիստոնէական հեղուծեան և եղբայրսիրութեան այս բոլոր գործերը բարձրացնում էին քրիստոնեայ համայնքի բարոյական մակերեւոյթը այն աստիճան, որ ամեն մի հոգեւոր ջանք գրանից յետոյ ցանկալի և դիւրին էր դառնում՝ կատարելու համար. 3) Սուրբ խորհրդին միահամուռ հաղորդուելով (ծով), այդ ժամանակ սուրբ ընծաները սարկաւազի միջոցով թարոււմ էին հիւանդութեան, զառամելութեան կամ՝ այլ յարգելի պատճառով բացակայողներին, իսկ այն ժամանակի քրիստոնեաները այս հոգեւոր եղբայրական մերձաւորութիւնը իրար հետ և նրանց հաղորդուելը Ս. խորհրդին՝ նրանց ընդունակ էին դարձնում հեղուծեամբ և խաղաղ հոգով համբերել կենցաղական բոլոր թշուառութիւններին ու փորձութիւններին, մինչև, Քրիստոսի անուամբ, նահատակութեանն անգամ. 4) իրար փոխադարձաբար ուսուցանելով և վարժեցնելով քրիստոնէական սկզբունքներին ու ճշմարտութիւններին, ինչպէս ասում է Բառնաբաս առաքեալը, որ վայել և օգտակար է բոլոր, ընդհանրապէս, սիրեցեալ եղբայրներին, բայց այդպիսի բարձր մտաւոր բարոյական հանգամանքը դրդում է քրիստոնեայ համայնքին հնարել քարեգործութեան բազմաթիւ և բազմատեսակ ձևեր, սկսած նիւթական օգնութիւնից առ մերձաւորն, (որը ի մասնաւորի՝ տեղի էր ունենում կիւրակէներ ճաշերին) և վերջացնելով դրամական օգնութեամբ, որ ժողովուում էր գանձանակում և ուղարկում քրիստոնեայ աշխարհի ամենաաղքատ եկեղեցիներին.

Համեմատելով նախկին ժամանակների քրիստոնեաների կիրակնօրեայ եկեղեցական այս գործունէութիւնը քրիստոնեայ ծուխերի նմանօրինակ գործունէութեան արդի երևոյթների հետ, ահամայ զարմանում ևս այժմեանի

սակաւութեամբ, ակամայութեամբ և անպտղութեամբ, այնպէս որ ինքն իրան հարց է ծագում. այժմ ինչ է մնացել նախկին արգասաբեր եկեղեցական կեանքից, որը արտայայտում էր տօն և յատկապէս կիւրակէ օրերին, ճիշդն ասած, հին ժամանակից մնացել է միմիայն ժամերգութիւնը, որին այժմ երևում են իրաւ ընդորովին անծանօթ մարդիկ, որոնք անընդունակ են քրիստոնէական հր և է միահամուռ գործունէութեան: Այսպէս, քրիստոնէական կիւրակէի տօնի իսկական նշանակութիւնը բաւականաչափ կորել է, և այժմեան կիւրակէն շատ շատերի համար դարձել է ակամայ հանգստի և լիովին անգործութեան օր, հրէական շաբաթի պէս, որը ընդարձացնում է, ինչպէս յայտնի է, հրէաների մէջ նրանց ամեն մի արդիւնաւոր գործունէութիւնը:

Բոլորովին հասկանալի է, որ ոչ-եկեղեցական մարդիկ և նրանք, որոնք հին եկեղեցու կազմը լաւ չգիտեն, ժամանակակից քրիստոնէական տօների յատկութեան մէջ տեսնելով պարապ ժամանակ անցկացնելու կորստաբեր տարր, որ ժողովրդին հրապօրում է դէպի դատարկաշրջիկութիւն և մոլութիւն, տօները կրճատելու մինչև անգամ կիւրակէ օրերն ևս աշխատելը պարտաւորական դարձնելու հարց են զարթեցնում: Բայց այս անում են նրանք այն պատճառով, որ (ինչպէս վերը նկատեցինք) ժողովրդի ոչ միայն քաղաքակրթական այլ և տնտեսական կեանքի համար, յօգուտ մերձաւորի՝ կիւրակէ և տօն օրերի ջանքերի ու բարեգործութեան մեծ նշանակութիւնը բոլորովին նսեմացել ու կորել է: Պէտք է յուսալ, որ քրիստոնէայ ծխի, որպէս Քրիստոսի փոքր եկեղեցու վերածնութեամբ, երբ երևան կը գայ ամուր և արգասաբեր կապը հովուի և հօտի մէջ, կը վերականգնի կիւրակէ և տօն օրերում քրիստոնէական միահամուռ գործունէութիւնը բազմազան ջանքերի և բարեգործութիւնների ձևով՝ յօգուտ մերձաւորի: Այն ժամանակ ամենևին կարիք չի լինի քրիստոնէական տօներն կրճատելու հարց յարուցանելու, և կիւրակէի տօնը նորից արելի պէս կը փայլի ամենօրեայ մթութեան և աշխարհային ունայնութեան մէջ:

Թարգ. Յ. Ա. Ե.

